1720-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՅՈՒՆՅԱՑ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Սկզբնաղբյուրների համադրման փորձ)

Ա. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

1720-ական թվականներին Սյունիքում բռնկված ազատագրական պատերազմի պատմության ուսումնասիրման հիմնական սկզբնաղբյուրը եղել է 1871 թ. Ա. Գուլամիրյանցի հրատարակած «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին» երկը[1]։ 1978 թ. Վենետիկում լույս տեսան այս աղբյուրի հեղինակային նախնական զույգ գրառումները (պատումները) և նրանց հիման վրա նույն հեղինակի՝ Ղուկաս վրդ. Սեբաստացու կազմած «Համապատում» բնագիրը[2]։ Այս ամբողջական հրատարակությունն օժտված է Ս. վրդ. Արամյանի ջանադիր և մանրազնին բնագրագիտական հետազոտությամբ, որով պարզվեց չափազանց կարևոր մի հարց. Գուլամիրյանցի հրատարակության հիմք ձեռագիրը ծագել է Ղ. վրդ. Սեբաստացու շարադրած Համապատում բնագրի հեղինակային օրինակից, որն էլ հիմնված է ավելի վաղ նույն հեղինակի[3] գրառած՝ Ստեփանոս Շահումյանի և Տեր Ավետիք քահանայի բանավոր պատումների վրա[4]։ Ս. Արամյանը հանգամանորեն ներկայացրել է նաև Ղ. Սեբաստացու խմբագրած բուն բնագրի նկատմամբ Ա. Գուլամիրյանցի հրատարակության բոլոր շեղումները[5]։ Սակայն ցարդ մասնագետների ուշադրությունից դուրս են մնացել նախնական պատումների և Ղ. Սեբաստացու Համապատումի միջև եղած զգալի տարբերությունները։ Հ. Դ. Փափազյանը, վերջերս հրապարակված մի հոդվածում, իրավացիորեն մատնանշել է Ղ. Սեբաստացու կողմից նախնական բնագրերի սխալ ընկալման երկու դեպք[6]։ Համապատումի այդպիսի շեղումները բավական շատ են. նրանց բացահայտումը և պարզաբանումը հաճախ զգալիորեն սրբագրում են 1720-ականների Սյունյաց ապստամբության մասին մեր իմացությունները։

Նախնական պատումների և Համապատում բնագրի բարեխիղճ գիտական հրատարակությունը եզակի հնարավորություն է ընձեռում քննելու XVIII դարի առաջին կեսի պատմագիր Ղ. Սեբաստացու երկի ստեղծման՝ նախնա-

---

1 Դաւիթ Բէգ. Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին եւ պատերազմաց Հայոցն Խափանու, որք եղեն ընդդ'մ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Տեառն 1722, եւ Հայոց 1171։ Վաղարշապատ. 1871։

2 Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց». Վենետիկ—Ս. Ղազար. 1978 (այսուհետև՝ Պատմութիւն Ղափանցւոց)։

3 Նույն տեղում, էջ 62—92։

4 Տե՛ս Պատմութիւն Ղափանցւոց. Պատում Ստեփան Շահումեանի, էջ 119—130 (այսուհետև՝ ՊՍՇ). Պատում Տէր Աւետիք քահանայի, էջ 131—143 (այսուհետև՝ ՊՏԱ) և Համապատում բնագիր, խմբ. հ. Ղ. վրդ. Սեբաստացի, էջ 147—181 (այսուհետև՝ Համապատում)։ Ուսումնասիրության ընթացքում նպատակահարմար համարեցինք առանձին՝ Զորացուցակ անունով բնորոշել նաև մեկ հատված՝ Դավիթ-բեկի զորավարների ցանկը և Տեր-Ավետիքին նվիրված ներբողը, էջ 143—145 (այսուհետև՝ Զորացուցակ)։

5 Տե՛ս Պատմութիւն Ղափանցւոց, էջ 197—222։

6 Հ. Դ. Փափազյան. Դավիթ-բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրական ուժերի հետ.—«Պատմա-բանասիրական հ[illegible]», 1987, № 1, էջ 98—99։

կան պատումները խմբագրելու և ի մի բերելու ընթացքում կիրառված սկզբունքների ու մոտեցումների համակարգը։

Սյունիք-Արցախի ազատամարտին վերաբերող հարակից նյութերի ընդգրկմամբ շարադրված այս հոդվածը, «Ղափանցւոց պատմության» երեք բնագրերի աղբյուրագիտական-պատմագիտական վերլուծության մեր առաջին փորձն է։

* * *

Նախնական երկու պատումների ունեցած տարբերությունները բացահայտվում են պատմական կարևոր մի դրվագի՝ Դավիթ-բեկի Սյունիք գալու մասին պատմող տեղերում։ Ահա թե ինչպես են այդ դեպքը նկարագրում Ս. Շահումյանը և Տեր-Ավետիքը։

Ս. Շահումյան. «Եւ ել նա յերեսաց իշխանին Վրաց եւ գնաց ժողովեաց իւր զօրս երկու հազար սպառազինաց եւ զքսան հարիւրապետս (որոց անուանքն են այսոքիկ. Ավթանդել, Կեօրկի, Կեօրկի փոքր կոչեցեալ, Շատուր, Ղարակեազ, Թաթոս, Եղիազար, Յարութիւն, եւայլն, եւ Ստեփանոս ընդ նոսա), եւ եկն եմուտ նոքօք ի գաւառն Սիւնեաց։ Ազդ եղեւ գաւառապետին Նախիջեւանու՝ եթէ Դաւութ Պէկն երթայ ի Խափան, զօրաժողով լինիլ անդ։ Եւ նա երկոտասան հազարաւ ի վերայ Դաւութ Պէկին։ Իսկ նա իբրեւ լուաւ զայս, հրաման ետ զօրս ժողովել ի տանէն Սիսանայ, եւ ժողովեալ խմբեցին ոչորս հազարս արանց, եւ զառաջին երկու հաղարսն յաւելեալ ի նոսա՝ եղեն վեց հազար վառեալք ի պատերազմ, եւ նոքօք հանդերձ ճակատեցաւ ի վերայ Նախիջեւանու գետոյն՝ ընդդէմ Խանին։ Արդ՝ իբրեւ բախեցան ընդ միմեանս, զօրքն Խանին ի փախուստ դարձան, եւ սոքա զկնի նոցա պնդեալ փախստեայս տանէին ի 18 ժամէ աւուրն մինչեւ ց21 ժամն վանեցին։ Եւ ի 22 ժամուն փախստեայքն ամենեքեան ի միասին հաւաքեցան ի կրունկս ընդդէմ Հայոցն դարձան։ Իսկ Հայքն փախստեայք եղեն ի նոցանէ մինչեւ ի գետափն. 2200 մարդ գետակուր եղեն. իսկ Դաւութ Պէկն, Ավթանտէլն, եւ երկոքեան Կօրկիքն ամրացան ի վէմ մի յափն գետոյն, եւ անտի մինչեւ ց2 ժամ գիշերոյն հասին ի Սիսան, եւ ամենայն զերծեալքն ի փախստէից ժողովեցան ի վերայ Դաւութ Պէկին» (ՊՍՇ, էջ 121)։

Տեր-Ավետիք. «Արդ՝ եկեալ Դաւիթ Պէկն ի Խափան 412 արամբ բանակեցաւ ի տեղին որ կոչի Իւշդէփէ, եւ անդ մարտեաւ զառաջինն ընդ Ղարաշօռլու կոչեցեալ Թուրքաց, եւ յաղթեաց նոցա։ Եւ ապա եկեալ բնակեցաւ ի յամուրն որ կոչի Շնհեր...» (ՊՏԱ, էջ 131)։

Համապատումը նույն իրադարձությունները ներկայացնում է այսպես. «Եւ նա յերեսաց իշխանին Վրաց, եւ եկն էհաս յաշխարհն Սիւնեաց յամի Տեառն 1722 եւ ի թուին Հայոց Ռ. Ճ. Հ. Ա. եւ բանակեցաւ ի սահմանս Սիսան գաւառին, ի գեղեցիկ դաշտավայրն յայն Երեքդագաթեան, որ ի յայլասեռից կոչի Իւշթէփէ։ ...Իբրեւ ելանէր յերկրէն Վրաց, առ նա ժողովէին ամենայն ազգ զօրութեանց յամենայն կողմանց գաւառին, որք լսէին զնմանէ, արք իբրեւ չորեք հարիւրք...։ Արդ՝ զառաջինն հարկանելով էհար Դաւիթ զՂարաշօռլու կոչեցեալ Թուրքն ի յՈւշթէփէն։ Եւ ապա անտի եկեալ բնակեցաւ ի յամուրն որ կոչի Շնհեր» (Համապատում, էջ 149—150)։

Այսպիսով, տեսնում ենք, որ այս դրվագի խմբագրման ժամանակ Ղ. Սեբաստացին նախապատվությունը տվել է Տեր-Ավետիքի հաղորդմանը, որի համաձայն՝ Սյունիքում Դավիթ-բեկի մղած առաջին ճակատամարտը տեղի է ունեցել Եռաբլրում (Ուշթեփեում), Դավթի հետ եկած ջոկատում եղել է մոտ 400 մարտիկ և այլն։ Ըստ այսմ պետք է աշխատենք պարզել Ղ. Սեբաստացու այսպիսի ընտրության առաջնորդ սկզբունքը։

Համապատումն ուշադիր քննելով նկատեցինք, որ Նախիջևան գետի վրա կայացած ճակատամարտի մասին Ս. Շահումյանի հաղորդումը չի անտեսվել և հայտնվել է Համապատումի ժամանակագրական առումով բոլորովին այլ տեղում՝ Որոտնա բերդի գրավման նկարագրությունից անմիջապես հետո՝ «ի յամին երրորդի, յետ գալստեան իւրոյ (Դավիթ-բեկի—Ա. Ա.) ի Ղափան» (Համապատում, էջ 153)։ Ամբողջությամբ բերում ենք Համապատումի

այդ հատվածը։ «Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ (Որոտնա բերդի գրավման օրերից հետո—Ա. Ա.) առաքել զբազմութիւն զօրաց իւրոց ի վերայ Թուրքացն Պարկուշատայ, եւ ինքեան սակաւուք մնալ ի Սիսան գաւառի։ Եկ ի վերայ նորա խանն Նախիջեւանու չորեքտասան հազարաւ. իբրեւ զայն լսէր Դաւիթ՝ զօրաժողով լինէր վաղվաղակի, ի Դարպասայ եւ ի տանէն Սիսանայ գունդ կազմէր. եւ դայր հասանէր նմա ի վերայ գետոյն Նախիջեւանու. եւ անդ իբրեւ ընդ միմեանս բախեցան երկոքին ճակատքն, զօրքն խանին փախստեայ լինէին ի սոցանէ, եւ սոքա զհետ մտանէին նոցա ի յուր եւ տասն ժամէ աւուրն մինչեւ ցքսան եւ միերորդ ժամն վանէին, եւ զբազում վիրաւորս ի նոցանէ դիաթաւալ կացուցանէին։ Բայց ի քսան եւ երկուերորդ ժամուն փախստեայքն ամենեքեան ի միասին հաւաքեցան եւ ի կրունկս ընդդէմ Հայոցն դարձան. իսկ սոքա իբրեւ զայն յանդուգն յարձակումն տեսանէին՝ լքանէին, կասէին եւ ի փախուստ դառնային ի նոցանէ մինչեւ ցգետափն. եւ անդ առ ի ճեպոյն տագնապի, էր որ գետակուր լինէր, եւ էր որ սրոյ ճարակ լինէր, զի պաշարեաց զնոսա սուր թշնամեացն զկնի, եւ յորդեալ գետն առաջի, եւ ոչ գոյր այլ ելք ճանապարհի. ուստի՝ յայնմիկ վայրի ծախեցան ի սոցանէ աւելի քան զհազար այր, մինչեւ ցհասանել գիշերոյն, եւ մնացեալքն փախուցեալ թաքեան ոմն ի վէմս, ոմն ի յայրս եւ ի մացառս. եւ յերկրորդ պահու գիշերոյն եկն էհաս Դաւիթ ի Սիսան, եւ փախըստեայքն ամենեքեան եկին ժողովեցան առ նա» (Համապատում, էջ 153)։

Այն հարցին, թե ինչո՞ւ է Ս. Շահումյանի հաղորդումը խմբագրվելուց հետո հայտնվել Համապատումի հենց այս և ոչ որևէ այլ տեղում, կարելի է պատասխանել Տեր-Ավետիքի պատումի հետևյալ հատվածի օգնությամբ. «(Դավիթ-բեկը) եկեալ պաշարեաց զմեծագոյն եւ զանառիկ բերդն Որոտնու, եւ էառ զայն յետ չորից աւուրց, ի տօնի Ծաղկազարդին։ Եւ եղեւ յետ այնորիկ առաքել զբազմութիւն զօրաց իւրոց ի վերայ Պարկուշատու, եւ ինքն մնաց սակաւուք ի Սիսան գաւառի։ Եւ ել ի վերայ նորայ Խանն Նախիջեւանու չորեքտասան հազարաւ ի պատերազմ, եւ անկան ի նմին պատերազմի ի Հայոցն ինն հարիւր այր։ Եւ անտի եկն Դաւիթ Պէկն ի Հալիձոր...» (ՊՏԱ, էջ 133—134)։

Անենք առաջին եզրակացություններ։ Համապատումը ստեղծելիս Ղ. Սեբաստացին նախ ուշադիր զննել է նույն դեպքի մասին իրարից զգալիորեն տարբեր զույգ հաղորդումները, ապա նկատել է Տեր-Ավետիքի պատումի բերված հատվածը, ուր նույնպես պատմվում է Դավիթ-բեկի և Նախիջևանի խանի զորքերի ընդհարման մասին։ Ս. Շահումյանի պատումում Նախիջևանի խանի հետ որևէ այլ բախման մասին տեղեկություն չտեսնելով, նա մտածել է. թե Նախիջևանի խանի դեմ մղված կռիվների մասին Ս. Շահումյանի և Տեր-Ավետիքի հաղորդումները վերաբերում են միևնույն ճակատամարտին։ Եվ, քանի որ Դավիթ-բեկի գործունեության սկզբնական շրջանի մասին Տեր-Ավետիքը խոսում է շատ ավելի հանգամանորեն, քան Ս. Շահումյանը (Տե՛ս ՊՏԱ. էջ 131—132. հմմտ. ՊՍՇ, էջ 121—122), Ղ. Սեբաստացին ժամանակագրորեն առավել հավաստի է համարել առաջինի պատմածները և Շահումյանի տեղեկություններով օժտել է Տեր-Ավետիքի «համապատասխան» հաղորդումը, իր կարծիքով, լրացնելով այն «բացակայող մանրամասնություններով», և շտկելով Ա. Շահումյանի «սխալը»։

Այժմ «Ղափանցվոց պատմության» հեղինակային երեք բնագրերի և Ղափանի ապստամբությանը վերաբերող այլ նյութերի օգտագործմամբ քննենք այն հարցը, թե որքանո՞վ է հիմնավորված նախնական պատումներում հիշատակված երկու մարտերի նույնացումը և միահյուսումը Համապատումի մեջ։ Նախ թվարկենք Նախիջևանի խանի հետ ընդհարման դրվագին վերաբերող նախնական պատումների հաղորդումների ունեցած տարբերությունները.

1. Ժամանակագրական.

Ըստ Ս. Շահումյանի, ճակատամարտը տեղի է ունեցել Դավիթ-բեկի Սյունիք մտնելուց անմիջապես հետո։

Տեր-Ավետիքի համաձայն, բախումը եղել է շատ ավելի ուշ՝ «ի յամին երրորդի, յետ գալստեան իւրոյ ի Ղափան»։

2. Պատմական իրադրության.

Երկու պատումներում հիշատակվող ճակատամարտերը տեղի են ունենում ռազմաքաղաքական բոլորովին տարբեր իրադրություններում. մի դեպքում (Ս. Շահումյան) Դավիթ-բեկը հազիվ հասցնում է անցկացնել իր առաջին զորահավաքը, այն էլ միայն Սիսիան գավառում, մյուս դեպքում (Տեր-Ավետիք) արդեն երրորդ տարին է, ինչ գոյատևում է Ղափանի հայոց անկախ իշխանությունը. Դավիթ-բեկի զորքի մի մասը արշավել է դեպի Բարգուշատ, իսկ նա, փոքրաքանակ զորքով, մնացել է Սիսիան գավառում։

3. Թվային.

ա) Ս. Շահումյանը հստակ ասում է, որ Դավիթ-բեկն իր հետ Սյունիք է բերել 2 000 «սպառազինաց» և 20 հարյուրապետ։ Տեղեկանալով Նախիջևանի խանի արշավանքի մասին, նա հասցնում է Սիսիան գավառից հավաքագրել ևս 4 000 զինվոր՝ «եւ զառաջին երկու հազարսն յաւելեալ ի նոսա՝ եղեն վեց հազար վառեալք ի պատերազմ»[7]։

Տեր-Ավետիքը նշում է սոսկ, որ Նախիջևանի խանի հարձակման պահին Դավիթ-բեկը մնացել էր «սակաւուք ի Սիսան գաւառի»։

Ղ. Սեբաստացին, հավաստի համարելով Տեր-Ավետիքի հաղորդումը, ուր ասված է նաև, թե Դավիթ-բեկը Ղափան է մտել 412 հոգուց բաղկացած ջոկատով, Ս. Շահումյանի վերը նշված թվական տեղեկությունները Համապատումից առհասարակ դուրս է թողել։

բ) Նախիջևանի խանի զորաբանակը, Ս. Շահումյանի համաձայն, բաղկացած էր 12 000, ըստ Տեր-Ավետիքի՝ 14 000 հոգուց։

գ) Տարբեր են հայոց զորքի կրած կորուստները. Ս. Շահումյանի համաձայն՝ 2 200 զինվոր, Տեր-Ավետիքի տվյալներով՝ 900 զինվոր։ Այս հարցում Ղ. Սեբաստացին հետևել է խմբագրական ուշագրավ սկզբունքի. իր լրատուների հաղորդած երկու տարբեր թվերը Համապատումի մեջ արտահայտել է նրանց միջինով, միաժամանակ, ավելի հակվելով Տեր-Ավետիքի հաղորդած թվի կողմը՝ «աւելի քան զհազար այր»։ Այսպիսի մոտեցումը թերևս բացատրելի է երկու հանգամանքով. առաջին և գլխավորը. ելնելով երկու ճակատամարտերի նույնացման իր վերոհիշյալ եզրահանգումից, Ղ. Սեբաստացին Շահումյանի համապատասխան հաղորդումն ամբողջությամբ համարել է պակաս արժանահավատ, երկրորդ՝ Տեր-Ավետիքի պատումում զոհերի թիվն ավելի փոքր է, ուրեմն էլ՝ ավելի քիչ է տուժում հայոց զորքի համբավը, և պակաս է վրդովվում ընթերցողը։

4. Հայոց զորքերի նահանջի ձևի և ուղղության տարբերությունները.

Ըստ Ս. Շահումյանի, վախճանից մազապուրծ Դավիթ-բեկը վերադարձել է Սիսիան՝ «եւ անտի մինչեւ ցշ ժամ գիշերոյն հասին ի Սիսան, եւ ամենայն զերծեալքն ի փախստէից ժողովեցան ի վերայ Դաւութ Պէկին»։

Տեր-Ավետիքը պատմում է, որ մեծ կորուստներ պատճառած մարտից հետո «անտի եկն Դաւիթ Պէկն ի Հալիձոր»։ Այստեղ նահանջի խուճապահարության մասին խոսք չկա. պատմողի հանգիստ տոնը հուշում է, որ այն կանոնավոր բնույթ է ունեցել։

Այսպիսով, ըստ ամենայնի, Ս. Շահումյանը և Տեր-Ավետիքը նկարագրում են տարբեր ճակատամարտեր, իսկ Ղ. Սեբաստացին դրանք նույնաց-

---

[7] Դավիթ-բեկի հետ Սյունիք եկած զորքի թիվը՝ 2 000, Ս. Շահումյանը նշում է երեք անգամ (տե՛ս ՊՍՇ, էջ 121), հետևաբար, այդ թիվը թյուրիմացության արդյունք համարելը բոլորովին անհիմն է. Ա. Գ. Աբրահամյանը, ծանոթ լինելով նախնական բնագրին, գրում էր. «Շահումյանցը, հավանական է, 2000 հոգի ասելով, նկատի է ունեցել Սյունիքի դինված ուժերի թիվը» (տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 168)։ Այս կարծիքն անտեղի է նաև այն պատճառով, որ Ս. Շահումյանը նշել է նաև Դավիթ-բեկի հետ եկած հարյուրապետների թիվը՝ 20, որը համընկնում է 2 000 հոգիանոց զորքի թվին։

բել է սխալմամբ։ Ինչպես շուտով կտեսնենք, թյուրիմացության աղբյուրը եղել է XVII—XVIII դարերում «Ղափան» տեղանվան գործածության բազմանշանակությունը։

Ստեփաննոս Շահումյանի պատումի համաձայն, Նախիջևանի խանի շտապ արշավելու գլխավոր նպատակն էր՝ կասեցնել Դավիթ-բեկի մուտքը Ղափան և այնտեղ անցկացվելիք հնարավոր զորահավաքը. «(Դավիթ-բեկը) եկն եմուտ նոքօք (2000 զինվորների հետ—Ա. Ա.) ի գաւառն Սիւնեաց։ Ազդ եղև գաւառապետին Նախիջևանու[8] եթէ Դաւուիթ Պէկն երթայ ի Խափան, զօրաժողով լինիլ անդ։ Եւ նա երկոտասան հազարաւ ի վերայ Դաւուիթ Պէկին»[9]։

Այս հատվածում Շահումյանը հստակորեն նշում է, որ Դավիթ-բեկն արդեն եկել էր Սյունիք՝ «ի գաւառն Սիւնեաց», բայց Ղափան դեռ չէր հասել։ Մյուս նախադասությունից արդեն պարզվում է, որ նա գտնվում էր Սյունիքի գավառներից մեկում՝ Սիսիանում. լսելով Նախիջևանի խանի զորքերի առաջխաղացման մասին, Դավիթ-բեկը «հրաման ետ զօրս ժողովել ի տանէն Սիսանայ»։

Այսպիսով, Ս. Շահումյանի այս հաղորդումը խիստ տրամաբանական է և համոզիչ։ Մանրամասն նկարագրությունը վկայում է, որ Շահումյանը անձամբ մասնակցել է Սիսիանում և Նախիջևան գետի վրա ծավալված անցքերին։ Առհասարակ, դժվար է հավատալ, որ Դավիթ-բեկի հետ Վրաստանից Հայաստան մտած Շահումյանը առաջին ճակատամարտը կարողանար շփոթել երկու տարի անց տեղի ունեցածի հետ։

Դիմենք Տեր-Ավետիքի պատումին. «Արդ՝ եկեալ Դաւիթ Պէկն ի Խափան 412 արամբ բանակեցաւ ի տեղին որ կոչի Իւղէփէ, եւ անդ մարտեաւ զառաջինն ընդ Ղարաշօղլու կոչեցեալ Թուրքաց, եւ յաղթեաց նոցա։ Եւ ապա եկեալ բնակեցաւ ի յամուրն որ կոչի Շնհեր»։

Եռաբլրի սարահարթը (Եռակատար, Ուլթեփե, Ուլթափալար, Իւղեփե) ձգվում է Սիսիան գավառի արևելյան սահմանային մասից՝ Ծործորի հովտից դեպի հարավ-արևմուտք՝ մինչև Գորիս գետի կիրճը[10]։ Սարահարթի կենտրոնով անցնում է Նախիջևան—Սիսիան—Գորիս—Շուշի—Բարդա հնուց ի վեր հայտնի ճանապարհը[11]։ Ճանապարհի աջ կողմում գտնվում է Եռաբլուր (Ուլթեփե) լեռնագագաթը (2124 մ)[12], Շնհերից (Շինուհայր) մոտ 7 կմ հյուսիս-արևմուտք, Հարժիս գյուղից՝ 4 կմ հյուսիս-արևելք, որտեղ և Դավիթ-բեկը ջախջախեց Ղարաշոռլուներին[13]։ Անկասկած, նախքան ընդհարումը Դավիթ-

---

8 Դեռևս Իսրայել Օրին Նախիջևանի խանին անվանում էր «ամենաոխերիմ թշնամի»՝ «А тот хан нам неприятель паче всех» (Տե՛ս Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века. сборник документов. т. II. ч. I. ред. Аш. Иоаннисян. Ереван, 1964, (այսուհետև՝ АРО, т. II, ч. I), с. 212։

9 Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են։

10 Տե՛ս Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. 2, Երևան, 1988, էջ 205։

11 Ստ. Լիսիցյան. Զանգեզուրի հայերը. Երևան, 1969, էջ 44, 92։ Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գ. II, Երևան, 1959, էջ 231—232։ Թ. Խ. Հակոբյան. Սյունիքի թագավորությունը. Երևան, 1966, էջ 99—100։ Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ. Կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 81։

12 Նորերս լույս տեսած «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» Եռաբլրի բարձրությունը, սխալմամբ, նշված է 3355 մ (տե՛ս Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան. նշվ. աշխ., հ. 2, էջ 206։ Հմմտ. Հայկական սովետական հանրագիտարան. հ. 3, Երևան, 1977, էջ 519)։

13 Ադոնցը 1937 թ. գրում էր, որ Ուլթեփեն, որը գտնվում է «Գորիսից Սիսիան տանող ճանապարհի վրա», XIX դ. վերջում—XX դ. սկզբում շարունակում էր վատահամբավ վայր մնալ և ավելացնում. «Քոչվորների հետ ընդհարումները շարունակվում են ցայժմ Ուլթեփեից անցնելիս»։—Տե՛ս Ն. Ադոնց, Դավիթ-բեկ և Տեր-Ավետիքի սերունդը.—«Հայրենիք» (ամսագիր), Բոստոն, 1937, № 2, էջ 70։

բեկն իր ջոկատով շարժվելիս է եղել այդ բանուկ ճանապարհով՝ Շնհերի ուղղությամբ, բայց ավելի կարևորն այն է, որ Եռաբլուրին նա կարող էր հասնել միայն Սիսիան գավառի միջով անցնելուց հետո:

Ըստ այսմ պարզ է, որ Տեր-Ավետիքն իր պատումն սկսում է Դավիթ-բեկի մուտքից ոչ թե Սյունիքի, այլ՝ բուն Ղափանի տարածք, ուստի և նրա շարադրանքից դուրս են մնում Սիսիանում տեղի ունեցած իրադարձությունները:

Չմոռանանք նաև, որ Դավիթ-բեկի Սյունիքում գտնվելու սկզբնական շրջանում Տեր-Ավետիքը և իր աներ մելիք Փարսադանը նրա հետ չեն եղել: Նրանք Դավիթ բեկին ներկայացել են միայն 1723 թ. գարնանը՝ Ջատկի տոնին Ջավնդուրում հայկական զորքերի տարած խոշոր հաղթանակից որոշ ժամանակ անց (Տե՛ս ՊՏԱ, էջ 132—133. հմմտ. Համապատում, էջ 151): Ուստի Վրաստանից հայկական զորաջոկատի Սյունիք գալու և Սիսիանում ու Նախիջևան գետի մոտ ծավալված իրադարձությունների վերաբերյալ Ստեփան Շահումյանի տեղեկությունները պետք է համարել առավել արժանահավատ, քանի որ վերջինս ի սկզբանե Դավիթ-բեկի հետ էր:

Ուշագրավ է նաև Դավիթ-բեկի հետ Եռաբլրի սարահարթ հասած զինվորների թվաքանակը՝ 412 հոգի: Եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ Նախիջևանի խանի դեմ ճակատամարտում Դավթի 6 000-անոց զորաբանակը (2 000-ը՝ իր հետ Վրաստանից եկածները, 4 000-ը՝ սիսիանցի մարտիկները) մեծ կորուստներ էր կրել (ըստ Շահումյանի՝ 2 200 հոգի գետախեղդ էին եղել), ապա 412 զինվորների թիվը միանգամայն ընդունելի պիտի համարել. պարտությունից հետո Սիսիանի զինվորությունը մնալու էր իր տեղում՝ թշնամու մուտքը գավառ արգելելու համար, իսկ Դավիթ-բեկի հետ եկած 2 000 մարտիկներից շատերը զոհվել էին, ոմանք էլ, հնարավոր է, առաջին իսկ անհաջողությունից հետո լքել էին նրան:

Փոքր-ինչ շեղվելով բուն նյութից, անորադառնանք հայագիտության մեջ արմատացած այն թյուր կարծիքին, թե իբր Դավիթ-բեկը Սյունիք է մտել ընդամենը 30—40 հոգիանոց ջոկատով[14]:

Ա. Գուլամիրյանցի հրատարակությունից, որի հիմքը Համապատումի մի ընդօրինակությունն է[15] և որից մինչև վենետիկյան բնագրերի լույս ընծայումը օգտվել են բոլոր ուսումնասիրողները, պարզորոշ երևում է, որ Ղարաչորոլուների հետ ընդհարման պահին Դավիթ-բեկի ջոկատը բաղկացած էր մոտավորապես 400 հոգուց՝ «արք իբրև չորեք հարիւր»[16]: Լեոն, սակայն, զանց առնելով այս տեղեկությունը և հիմք ընդունելով 1724 թ. փետրվարի 1-ին Ղարաբաղից Իվան Կարապետի տված հաղորդումը, որտեղ ասված է, թե «Вахтангов сын своих людей 30 человек (послал) к Большим Армянам»[17], եզրակացնում է, որ Դավիթ-բեկը՝ հենց այդ 30 մարդկանց մեջ էր և, որ նա միայն Սյունիք մտնելուց հետո է տեղում 400 մարդ հավաքագրել[18]:

---

14 Տե՛ս Լեո. Երկերի ժողովածու (տասը հատորով), Հայոց պատմություն, հ. 3. գիրք 2. Երևան, 1973 (այսուհետև՝ Լեո, հ. 3, գիրք 2), էջ 180—181: Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից. Երևան, 1953, էջ 80—81: АРО, т. II, ч. I, с. LV. Армянское войско в XVIII в.: из истории армяно-русского военного содружества (исследование и документы). Подготовил к изданию А. Н. Хачатрян. Ереван, 1968, с. 70. Վ. Մ. Մարտիրոսյան. Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում. Երևան, 1971, էջ 110: Հ. Ա. Կնյազյան. Ազատագրական պայքարը Դավիթ-բեկի գլխավորությամբ. Երևան, 1963, էջ 62: Ն. Ագոնց. Դավիթ-բեկ և Տեր-Ավետիքի սերունդը, էջ 68:

15 Ղափանցւոց պատմութիւն, Առաջաբան, էջ 72—76:

16 Դաւիթ բէգ. Ընտիր պատմութիւն..., էջ 6. հմմտ. Համապատում, էջ 149:

17 Г. А. Эзов. Сношения Петра Великого с армянским народом. СПб. 1898, с. 366.

18 Տե՛ս Լեո, հ. 3, գիրք 2, էջ 180—181:

Հետագայում Իվան Կարապետը կրկնել է իր նախորդ տեղեկությունը, ավելացնելով Դավթի անունը[19], որ և Ա. Գ. Աբրահամյանին թույլ է տվել գալ նույն եզրահանգմանը[20]։ Այս առումով նշենք միայն մեկ հանգամանք. «Պատմությունը» կառուցված է Ղափանի ապստամբության անմիջական մասնակիցների տեղեկությունների հիման վրա, և մենք որևէ հիմք չունենք դրանք ստորադասելու Սյունյաց ազատամարտի սկզբից մոտ մեկ և կես տարի անց՝ 1724 թ. հունվարին Ղարաբաղում հայտնված և նույն թվականի ապրիլին կարճ ժամանակով Ղափան անցած Իվան Կարապետի հաղորդումներին։ Ասենք միայն, որ երբ Շահումյանի նշած 20 հարյուրապետների կողքին, Իվան Կարապետը հայտնում է Դավիթ-բեկի հետ միասին Սյունիք եկած 30 մարդկանց մասին, ապա հասկանալի է դառնում, որ նա նկատի է ունեցել զորահրամանատարներին և ոչ թե շարքային զինվորներին։ Նկատառման է արժանի, որ 20 հարյուրապետների մի մասը հիշվում է հականե-հանվանե (ՊՍԾ, էջ 121, հմմտ. Զորացուցակ, էջ 143)։Սա նույնպես հուշում է, որ խոսքը զորահրամանատարների մասին է՝ հասարակ զինվորների անունները դժվար թե հիշատակվեին։

Ա. Գ. Աբրահամյանը, սակայն, չի բավարարվել միայն Իվան Կարապետի տեղեկությունները բերելով։ Նա գրում է. «Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2888 ձեռագիրը, որը պարունակում է Հ. Մելիք-Սելիմյանցի «Համառօտ պատմութիւն Հայկազնեայց» աշխատությունը և ուր օգտագործված են Դավիթ-բեկի մասին մեզ անծանոթ աղբյուրներ ևս, Դավիթ-բեկին ուղեկցող մարդկանց թիվը հաշվում է 40 հոգի։ Այնտեղ ասված է. «(Դաւիթ Բէկ) ընդ իւր առեալ արս իբրև քառասուն...»[21]։ Այսպիսով, հաստատվում է Դավիթ-բեկի պատմիչի այն տեղեկությունը, որ Դավիթ-բեկը... Սյունիք է գնացել իր 30—40 հետևորդների հետ միասին»[22]։

Նախ նշենք, որ և՛ Ա. Գուլամիրյանցի տպագրում, և՛ վենետիկյան երեք բնագրերում չկա որևիցե տվյալ այն մասին, թե իբր Դավիթ-բեկը Սյունիք է ժամանել «իր 30—40 հետևորդների հետ»։

Ինչ վերաբերում է Հ. Մելիք-Սելիմյանցի վերոհիշյալ «աշխատությանը», ապա յուրաքանչյուր պատմաբան, թերթելով այդ ձեռագիրը, կարող է ասել, որ դա Մ. Չամչյանի «Հայոց պատմության» պարզ վերաշարադրությունն է և ոչ ավելին։ Ինչպես և պետք էր սպասել, Հ. Մելիք-Սելիմյանցի «հաղորդումը» վերցված է ոչ թե «անծանոթ» աղբյուրից, այլ Չամչյանի երկից։ Մ. Չամչյանը գրում է. «Ապա հրամանաւ (վրաց) իշխանին առեալ Դաւթի ընդ իւր ի հայոց եղելոց ի Վրաստան արս իբր քառասուն՝ եկն ի Սիսական գաւառ, այն է Սիսան. և բանակեցաւ ի դաշտավայրն կոչեցեալ Երեք գագաթ, և յայլազգեաց՝ Իւլ Թէփէ. և եհար անդ զայլազգիս՝ որք կոչէին Քարա չօղուր Եկեալ անդի յաւանն Շնհեր՝ որ էր ի ձեռս Հայոց, կոչեաց զառաջնորդն Տաթևու, և յայտնեաց նմա, թէ յինչ իրաց պէտս եկեալ իցէ ինքն. և ՀԵռամբ նորա ազդ արար հայոց բնակելոց ի Սիւնիս։ Եւ նոքա իբրև գիտացին զայս՝ ուրախ եղեն, և վաղվաղակի ժողովեցան առ նա արք չորեքհարիւր՝ ամենեքին զօրաւորք...»[23]։

Նախքան վերոբերյալ մեջբերումի բուն քննությանն անցնելը, պետք է ասել, որ Չամչյանի «Հայոց պատմության»՝ Դավիթ-բեկի ապստամբությանը վերաբերող երկու գլուխները, գրեթե ամբողջությամբ, Համապատումի երբեմն վերախմբագրում դարձող վերաշարադրանքն են[24]։ Համապատումի օգ-

---

19 Армяно-русские отношения в 1-ой трети XVIII в., сборник документов, т. II, ч. II, ред. Аш. Иоаннисян, Ереван, 1967 (այսուհետև՝ АРО, т. II, ч. II), док. № 277, с. 184.

20 Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., էջ 80—81, նույնի՝ Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ, էջ 169։

21 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2888, էջ 334բ։

22 Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., էջ 81։

23 Միքայել Չամչյանց. Հայոց պատմություն. հ. Գ, Երևան, 1984, էջ 785։

24 Նույն տեղում, գլուխ ԽԸ և ԽԹ, էջ 784—800. հմմտ. Պատմութիւն Ղափանցւոց, Առա-

տագործման Ջամչյանի սկզբունքը պատկերացնելու համար լիովին բավական է անդրադառնալ նրա մի շարք թվային շտկումներին։

Բարգուշատի եղերական արշավանքի մասին խոսելիս Համապատումը հստակ չի նշում Թորոսի բանակի թվաքանակը, հայտնելով միայն, որ Ֆաթհ-Ալի սուլթանի և նրա եղբոր զորքը «կրկնապատիկ եւ եռապատիկ, եւ առաւել եւս» էր՝ «իբրու ութ եւ տասն հազարաւ» (Համապատում, էջ 158)։ Ջամչյանը խմբագրել է այս տեղեկությունը. որպես հիմք է ընդունել թշնամու 18 հազարանոց բանակի «եռապատիկ» առավելությունը և, այս դեպքում, ճիշտ հաշվել Թորոսի զինվորների քանակը՝ «իբր վեցհազարօք»[25]։ Բայց այստեղ էականն այն է, որ աղբյուրի նկատմամբ Ջամչյանի վերաբերմունքը տրամաբանական լինելով հանդերձ, խստիվ այնքան էլ ճշգրիտ չէ (որպես ելակետ ընդունելով թշնամու զորքի «կրկնապատիկ» առավելությունը, Ջամչյանը կստանար 9 000 հայ զինվոր (18 000 : 2=9000), իսկ եռապատիկից «առաւել եւս»-ը՝ 6 000-ից պակաս հայ զինվոր)։ Ըստ երևույթին, ինքն էլ ճշգրիտ չի համարել իր հաշվարկը, այդ պատճառով էլ Թորոսի բանակի կորուստները հաշվել է «աւելի քան զերիս հազարս»[26], և ոչ թե 4 600 հոգի, որ պետք է հետևեցներ Համապատումի համապատասխան հաղորդումից, ուր ասված է, թե «զերծեալքն ի նոցանէ (իմա՝ 6 հազարից) միայն հազար չորս հարիւր այր եկին ի Ջավնդուր» (Համապատում, էջ 158)։

Հալիձորի պաշտպանության առաջին վեց օրերին երկու կողմերի տված կորուստների մասին Համապատումում կարդում ենք. «...եւ զաւուրս վեց մարտ եղեալ ընդ միմեանս կռուէին. եւ ի կողմանցն հակառակաց (իմա՝ օսմանյան բանակից) յաւուրն հարիւր, կամ երկու հարիւր, եւ երբեմն երեք կամ չորս հարիւր անկանէին. եւ ի սոցանէ (իմա՝ Հալիձորի պաշտպաններից—Ա. Ա.) հազիւ մի ոք կամ երկու՝ վասն ամրութեան տեղւոյն» (Համապատում, էջ 168)։ Այս հատվածը Ջամչյանը խմբագրում է այսպես. «...և կարգ եղեալ շուրջանակի պատերազմէին... զաւուրս վեց։ Իսկ որք ի ներքո էին՝ զգուշութեամբ և անձայն մարտնչէին. որով և անկանէին յայլազգեաց անտի յաւուրն իբր երեքհարիւր անձինք ասելի կամ պակաս. իսկ յամրականացն անկան յայն վեց աւուրն իբր ոգիք ութն»[27]։

Ինչպես տեսնում ենք, թվային տվյալները շատ են որոշակիացված, ընդ որում կիրառված է խմբագրական նույն եղանակը, որը կարելի է բնորոշել տրամաբանական-կիսակամայական եզրահանգում անունով։ Սրա տրամաբանական կողմն արտահայտված է նրանում, որ Ջամչյանը փորձում է տալ Համապատումից իրեն հայտնի ծայրային թվերի միջինը. մի դեպքում դրանք 100 և 400 թվերն են (օսմանյան բանակի տարբեր օրերին տված զոհերը տատանվում են սրանց միջև), որոնց միջինը Ջամչյանը ընդունել է 300-ը։ Մյուս դեպքում ծայրային թվերը 7-ը և 11-ն են[28]. սրանց միջինն էլ համարել է 8-ը։

ջարան, էջ 71—72։ Միաժամանակ, Ջամչյանի երկի խնդրո առարկա հատվածում նկատվում են ինչ-որ ուրիշ, ըստ երևույթին բանավոր աղբյուրից քաղված երկու ավանդապատումներ դրված՝ մատակ ձիերի օգնությամբ ձեռնարկված գրոհի և Մարազայի ճակատամարտի որոշ մանրամասնությունների մասին (նույն տեղում, էջ 796_{21}—797_{13}, 797_{42}—798_{13})։ Այս դրվագները, սակայն, ավարտուն ավանդական զրույցի տեսք ունեն և հենց այդպես էլ մտցված են ընդհանուր շարադրանքի մեջ։ Մյուս բոլոր դեպքերում Ջամչյանի բնագիրը Համապատումի վերաշարադրությունն ու խմբագրումն է։

25 Մ ի ք ա յ ե լ Ջ ա մ չ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 788։ Ջամչյանը ծանոթ չի եղել Ս. Շահումյանի և Տեր-Ավետիքի պատումներին (տե՛ս Պատմութիւն Ղափանցւոց, Առաջաբան, էջ 69), հետևապես նա չէր կարող օգտվել Ս. Շահումյանի այդ առթիվ արված հաղորդումից (ՊՍՇ, էջ 124)։

26 Մ ի ք ա յ ե լ Ջ ա մ չ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 788։

27 Նույն տեղում, էջ 794։

28 Համապատումն ասում է, որ 6 օրվա ընթացքում Դավիթ-բեկի զինվորներից ընկել են «հազիւ մի ոք կամ երկու», այսինքն՝ եղել է առնվազն մեկ օր, երբ ընկել են երկու զինվոր (եթե ընդունելու լինենք, որ մյուս 5 օրերի ընթացքում զոհվել է օրական մի զինվոր), այդ-

եղանակի կիսակամայական դրսևորումն արտահայտված է նրանում, որ՝ նշված ծայրային թվերի ճշգրիտ միջին թվաբանականները կլինեին 250-ը (ոչ 300-ը) և 9-ը (ոչ 8-ը)։ Դժվար չէ նկատել, որ առաջին դեպքում Ջամշյանը փոքր-ինչ մեծացրել է օսմանցիների զոհերի միջին քանակը, իսկ երկրորդ դեպքում՝ փոքր-ինչ նվազեցրել է Հալիձորի պաշտպանների կորուստների միջինը։ Այս երևույթը, թերևս, բացատրելի է Դավիթ-բեկի զինվորներին է՛լ ավելի քաջ ու աննկուն ներկայացնելու ցանկությամբ։ Միաժամանակ, ճշմարտության հանդեպ Ջամշյանն ընդհանուր առմամբ չի մեղանչում։ Խմբագրական այս եղանակի կամայականությունն իր սահմաններն ունի՝ առաջանում է միայն այն դեպքերում, երբ աղբյուրը որոշակի պատմական փաստի վերաբերյալ ունի ոչ հստակ, հավանական տարբեր մոտեցումներ հանդուրժող տվյալներ։ Այս սահմանների գոյությունն էլ մեզ թելադրեց եղանակն անվանել ոչ թե տրամաբանական-կամայական, այլ տրամաբանական-կիսակամայական[29]։ Հիշենք, որ այս եղանակով Իր առաջնորդվել նաև Ղ. Սեբաստացին՝ Նախիջևան գետի վրա տեղի ունեցած ճակատամարտում հայոց զորքի կորուստների թիվը որոշելիս։

Եղանակի էությունը ցայտուն եռևում է Ջամշյանի խմբագրական մեկ այլ միջամտության մեջ ևս։ Խոսելով Ուզունբենդ կիրճում թուրքական զորքերի ջարդի մասին, Համապատումը նշում է, որ «էր կիրճն այն երկայն՝ ձգեալ իբրու գնացս միոյ ժամու կամ երկուց» (Համապատում, էջ 172)։ Ջամշյանը սա դարձրել է. «էր կիրճ անցիցն երկայն ձգեալ իբրու գնացս ժամու և կիսայ»[30]։ Մեկնաբանությունները, թերևս, ավելորդ են։

Դավիթ-բեկի Սյունիք մտնելու մասին Ջամշյանից քաղված վերոբերյալ ընդարձակ հատվածը, անտարակույս, Համապատումի համապատասխան մասի հիման վրա հեղինակի արած վերաշարադրանքն է (Համապատում, էջ 149_{18}—էջ 150_{23})։ Իսկ զինվորների 40 թիվը՝ տրամաբանական-կիսակամայական եզրահանգման եղանակով Համապատումի վերախմբագրման արդյունք է։ Պարզաբանենք։

Համապատումի սահմանագծված հատվածում նկարագրված են Ուլթեփեում Դավիթ-բեկի մղած երկու հաղթական մարտերը. առաջինը՝ Ղարաշոռլուների, երկրորդը՝ Ջիվանշիրների դեմ։ Առաջին մարտին մասնակցած՝ Դավիթ-բեկի զինվորների քանակը որոշակի նշված չէ, բայց միանգամայն կռահելի է, որ դրանք նրա հետ եկած 400 վիրահայերն են. «Իբրեւ ելանէր յերկրէն Վրաց, առ նա ժողովէին... արք իբրեւ չորեք հարիւրք» (Համապատում, էջ 149)։ Թեև երկրորդ մարտից առաջ Դավիթ-բեկը ժողովել էր «առ ինքն զարսն Շնհերու» (Համապատում, էջ 150), սակայն այս անգամ ևս նա դուրս է գալիս 400 մարտիկներով։ Հենց այս փաստն էլ թյուրիմացության մեջ է գցել Ջամշյանին, քանի որ, ըստ տրամաբանության, Դավիթ-բեկի ջոկատի և շնհերցիների միացումից հետո հայկական զորագունդը պետք է Ջիվանշիրների դեմ դուրս գալիս ունենար 400-ից ավելի մարտիկ։ Արդ, Ջամշյանը մակաբերել է, որ Ղարաշոռլուների հետ կռվելիս Դավիթ-բեկի տրամադրության տակ եղել է 400-ից պակաս զինվոր, իսկ 400-ի մեծ մասը եղել են Շնհերում հավաքագրվածները։ Ահա այստեղ էլ՝ Դավիթ-բեկի հետ սկզբնապես եղած ռազմիկների թիվը որոշելու համար գործի է դրվել տրամաբանական-կիսակամայական եզրահանգման եղանակը։ Թվում է, պատահական չէ 400-ի և 40-ի թվաբանական «ազգակցությունը» (մեկ զրոյի տարբերությունը). հավանաբար, ընդունելով, որ եկվոր 1 ռազմիկին Շնհերում պետք է

պիսով՝ զոհված զինվորների նվազագույն հնարավոր քանակը 7-ն է։ Եվ հակառակը. եղել է առնվազն մեկ օր, երբ զոհվել է մի զինվոր (եթե ընդունելու լինենք, որ մյուս 5 օրերի ընթացքում ընկել են օրական երկու զինվոր), այդպիսով՝ զոհված զինվորների հնարավոր առավելագույն քանակը 11-ն է։

29 Ըստ էության, այս երևույթը հատուկ էր ուշ միջնադարի պատմագիտությանն ընդհանրապես։

30 Միքայել Ջամշյան. նշվ. աշխ., էջ 796։

գումարվեին 10-ը հավաքագրվածներ, Ջամչյանը հայտնի 400-ից արել է տասնապատիկ նվազեցում և ստացել 40։

Իրականում, Ջիվանշիրների դեմ կռվում Դավիթ-բեկը դարձյալ օգտագործել է Վրաստանից իր հետ Շնհեր հասած 400 հավատարիմ, փորձված և լավ զինված մարտիկներին (2 000-անոց ջոկատից մնացածներին) և այդ երեքօրյա գոտեմարտի առաջին գրոհը ձեռնարկել է նրանց հետ միասին։ Իսկ Շնհերի զինական ուժը, ըստ երևույթին, կատարել է օժանդակ կամ, որ առավել հավանական է, պահեստային ուժի դեր և ավելի ուշ է մտել մարտի մեջ։ Այս դրվագի մասին Տեր-Ավետիքի պատմածի (Համապատումի խնդրո առարկա հատվածի հիմքի) մեջ զգացվում է Ջիվանշիրների դեմ մղված մարտի առաջին գրոհին մասնակցած 400 զինվորների և Դավիթ-բեկի տրամադրության տակ եղած տեղական զորքի տարբերությունը. «Իսկ նորա (Դավիթ-բեկը) եւս ժողովեալ առ ինքն զարսն Շնհերու, ել ընդ առաջ նոցա ի յԻշղէփէ, եւ անտի ետես զզօրս թշնամեացն իբրեւ զվեշտասան հազարս, եւ ընդ ինքեան առեալ զարս սպառազէնս 400, յուսացեալ յԱստուած՝ գոչեցին առ նա, եւ հարեալ ի դիմի նոցա յաւուրս երիս՝ խորտակեցին զնոսա» (ՊՏԱ, էջ 131)։

Որ այդ չորս հարյուրը շնհերցիները չէին, երևում է նաև «Պատմության» Զորացուցակից, ուր ասված է, որ Շնհերի զորաջոկատում կար 550 ռազմիկ (Զորացուցակ, էջ 143)։

Դավիթ-բեկի հետ Սյունիք մտած զորաջոկատի մեծաքանակ լինելու մասին հուշում է նաև այն, որ Նախիջևանի խանը շտապեց իր 12 հազարանոց զորքով անձամբ արշավել նրա դեմ։

Վերջապես, Վրաստանից եկած հայոց զորաբանակի թվաքանակի մասին Ս. Շահումյանի և Տեր-Ավետիքի տված հստակ տեղեկությունները, ինչպես տեսանք, ոչ միայն չեն հակասում, այլ ընդհակառակը՝ լրացնում են միմյանց։

* * *

Այժմ քննենք Դավիթ-բեկի մուտքը Ղափան ըստ Համապատում բնագրի.

«[Վրաց իշխան Շահնավազը] կոչեալ զԴաւիթ Պէկն... ետ նմա զիշխանութիւն երթալ յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Ղափան... ել նա յերեսաց իշխանին Վրաց, եւ եկն էհաս յաշխարհն Սիւնեաց... և բանակեցաւ ի սահմանս Սիսան գաւառին, ի գեղեցիկ դաշտավայրն յայն Երեքգագաթեան, որ ի յայլասեռից կոչի Իշքէփէ» (Համապատում, էջ 149)։

Աշ. Հովհաննիսյանը, քննության առնելով «Ղափան» տեղանունը և մատնանշելով նրա բազմանշանակությունը ուշ միջնադարում, ցույց է տալիս, որ այն, երբեմն, իր լայնիմաստ կիրառությամբ ներառում էր նույնիսկ Կուր և Արաքս գետահովիտների միջև ընկած ամբողջ լեռնաշխարհը[31]։

Նկատի ունենալով XVII—XVIII դդ. մի շարք հաղորդումներ, նա գրում է. «Ղափան անունը հին աղբյուրներում գործ էր ածվում լայն իմաստով, ընդգրկելով նաև Սիսիանը»[32]։ Պետք է նշենք, սակայն, որ նույն ժամանակաշրջանի որոշ վավերագրերում Սիսիան գավառն, այդուամենայնիվ, պարզորոշ կերպով զատվում էր բուն Ղափանից։ Այսպես, Իսրայել Օրին, 1699 թ. սեպտեմբերի 22-ին Պֆալցի կուրֆյուրստին ուղղված իր զեկուցագրում Արևելյան Հայաստանի 18 նահանգների ռազմական ուժերը թվարկելիս առանձին է նշում «Մեծ Ղափանը (ուր կա յոթը գավառապետություն)» և «Սիսիանի նահանգը»[33]։ Ղարաբաղի կաթողիկոսները[34] և մելիքները, 1725 թ. հուլիսի 25-ին Եկատերինա կայսրուհուն հղված նամակում, հայկական ապստամբ «երկրները» նշելիս, Ղափանը և Սիսիանը կրկին տարբերանշում են[35]։ Ինչպես տեսանք, Ս. Շահումյանը նույնպես զանազանում էր Ղափանը Սիսիանից։

31 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ... գ. II, էջ 230—238։

32 Նույն տեղում, էջ 232։

33 Տե՛ս Г. А. Эзов. Указ. соч., с. 35—36. Համա. Լեռ, հ. 3, գիրք 2, էջ 56։

34 Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը և նրից մանկանց կաթողիկոս Ներսեսը։

35 АРО, т. II, ч. II, док. № 315, 316, с. 249, 252:

Հասկանալի է, ուրեմն, որ «Ղափան» տեղանունը, բացի «Սյունյաց աշխարհի» հոմանիշը լինելուց[36], միաժամանակ գործածվել է նաև ավելի նեղ իմաստով։ Այս իրողությունն է, որ իր լրատուների պատմածները համադրելիս Ղ. Սեբաստացին հաշվի չի առել և Դավիթ-բեկի մուտքը Սյունիք նույնացրել է նրա՝ բուն Ղափան մտնելու հետ։

Հայտնի է, որ Ղ. Սեբաստացին զբաղվել է նաև Հայաստանի պատմական աշխարհագրությամբ և քարտեզագրությամբ[37]. նրա պահպանված անտիպ աշխատությունները նկարագրել է Ս. Արամյանը[38]։ Դրանցից առավել արժեքավոր են՝ ա. «Երկրորդ տետրակ աշխարհագրութեան (Աշխարհագրական բառարան)» ուսումնասիրությունը, որի 45—48 էջերում նկարագրված են «բերդորայք, աւանք և ոմանք եւս գիւղորայք երկրին Խափանու, Զավնդրու եւ Գողթանայ»[39], բ. շուրջ 480 էջանոց «Համառօտ պատմութիւն թագաւորացն Հայոց և աշխարհագրութիւն Հայաստանի և աշխարհագրական բառարանը»։ Ղ. Սեբաստացին պատմաաշխարհագրական աշխատանք ձեռնարկող առաջին Մխիթարյանն էր։ Ահա այս հատուկ հետաքրքրությունն է պատճառը, որ Համապատգամի վերաբերյալ հատվածում արձանագրվել է նախնական պատումների մեջ բացակայող պատմաաշխարհագրական այսպիսի մի փաստ. Ուշթեփեն գտնվում է «ի սահմանս Սիսան գաւառի»։ Ամենայն հավանականությամբ, այս տեղեկությունը քաղված է նրա պատմաաշխարհագրական հետազոտություններից կամ սրանց սևագրություններից։

Ե. վ. Փեշիկյանը տպագրել է Սեբաստացու «Համառօտ պատմութիւն թագաւորացն Հայոց» անտիպ աշխատության մի հատված[40], որի մեջ հետաքրքրող մասը հետևյալն է. «Դարձեալ գաւառն Խաբան որ և Հաբանդ ասի, թէպէտ այժմ ընդարձակապէս առեալ ունի և զԳուրհամ, զՁավնդուր և զայլ գաւառս Սիւնեաց աշխարհին, զակայն յատկապէս ունի զՓոքր Սիւնիս և զՀալիձոր ուր բնակէր Դաւիթ Պէկն ի մտանելն նորա ի Խաբան...»[41]։ Հատուկ Դավիթ-բեկի «Պատմության» համար Սեբաստացին պատրաստել է նաև մի քարտեզ[42], որը տպագրել է Ս. Արամյանը[43]։ Այստեղ Փոքր Սյունիքը տեղադրված է «Հալիձոր» (իմա՝ Ողջի) և «Զավնդուր» (իմա՝ Ծավ կամ Բասուտ. վերին հոսանքում կոչվում է նաև Շիշկերտ, ստորին հոսանքում՝ Խաչին կամ Շիկահող) գետերի միջև. Հալիձորը նշված է նույն գավառի մեջ։ Եթե նույնիսկ ընդունենք, որ Փոքր Սյունիքը ավելի լայն տարածք է ընդգրկել, միևնույն է՝ քարտեզից ակներև է, որ Սիսիանը մտցված չէ նրա մեջ. Փոքր Սյունիքը տեղադրված է Կասպել (Գազրույլ, այժմ՝ Արամազդ) լեռնագագաթից հարավ։ Ուշագրավ է, որ Սիսիան գավառը, նրա խոշորագույն գյուղերը՝ Բռնակոթը և Անգեղակոթը[44], ինչպես նաև Սիսիան ավանը, քարտեզի վրա ընդհանրապես նշված չեն։

Ամփոփենք շարադրվածը։ Սյունյաց ապստամբության առաջին դրվագները Ս. Շահումյանի և Տեր-Ավետիքի պատումներում զուգընթաց չեն. առաջինը շարադրում է Սիսիանում և Նախիջևան գետի վրա տեղի ունեցածը, իսկ

---

36 Մինաս արքեպիսկոպոս Փերվազյանը 1722 թ. մի առիթով գրում էր. «...Խափընստանն, որ է տուն Սունեաց...» (տե՛ս APO, т. II, ч. II, док. № 169, с. 18. հմմտ. ՊՏԱ, էջ 136. Համապատում, էջ 149)։

37 Տե՛ս Սահակ Ճեմճեմյան. Հ. Ղուկաս Սեբաստացի (1709—1752) հեղինակ Դավիթ բեկի պատմութեան.—«Բազմավեպ», ՃԼ, 1972, № 4, էջ 491—501։

38 Տե՛ս Պատմութիւն Ղափանցւոց, էջ 188—193։

39 Նույն տեղում, էջ 190։

40 Տե՛ս Ե. վ. Փեշիկյան. «Դաւիթ Բէկի» պատմական աղբյուրները և Մխիթարյանք.—«Բազմավեպ», ՂԶ, 1938, № 6—9, էջ 172—187։

41 Տե՛ս Ե. վ. Փեշիկյան. նշվ. աշխ., էջ 175։

42 Պատմութիւն Ղափանցւոց, Առաջաբան, էջ 67։

43 Քարտեզը տե՛ս նույն տեղում, 49-րդ էջից առաջ՝ ներդիրում։

44 Ա շ. Հովհաննիսյան. Դրվագներ..., գ. II, էջ 313—314։

երկրորդը պատումն սկսում է ավելի ուշ կայացած՝ Եռաբլրի (Ուլթեփեի) ընդհարումից։ Համապատումը կազմելիս Ղ. Սեբաստացին թյուրիմացաբար աղավաղել է Դավիթ-բեկի մուտքի վերաբերյալ նախնական պատումների հավաստի տեղեկությունները. շփոթի հիմնապատճառը եղել է Ղափան տեզանվան բազմանշանակությունը։

* * *

Վերջնականապես հաստատելու համար նախնական բնագրերի վերն արծարծված տվյալների նույնացման և միահյուսման սխալականությունը, քննենք Տեր-Ավետիքի պատումում հիշատակվող՝ Նախիջևանի խանի զորքի հետ Դավիթ-բեկի նոր բախման հարցը և այն, թե ինչո՞ւ այդ դեպքի մասին ոչինչ չի հաղորդում Ս. Շահումյանը։

Տեր-Ավետիքի համաձայն, դեպքերն ունեցել են այսպիսի հաջորդականություն. հայոց զորքերը գրավել են Զևու, այնուհետև՝ Որոտան բերդերը։ Այդ գործողություններից անմիջապես հետո հայկական մի ստվար զորաբանակ արշավել է Բարգուշատի դեմ, իսկ Նախիջևանի խանը, օգտվելով այդ հանգամանքից, 14 հազարանոց զորքով[45] հարձակվել է Սիսիանում գտնվող Դավիթ-բեկի վրա[46]։

Զևուի առումը հիշվում է նաև Ս. Շահումյանի պատումում (ՊՍՇ, էջ 124)։ Բայց այստեղ անցքերի հաջորդականությունն այլ է. Զևուի գրավումից հետո Ջավնդուրի հայոց զորքերի գլխավոր հրամանատար Թորոս-բեկը գժտվում է Դավիթ-բեկի հետ և վերադառնում Ջավնդուր։ Միևնույն ժամանակ Կենավուզ է վերադառնում Պապ զորավարը (ՊՍՇ, էջ 124. հմմտ. Համապատում, էջ 157)։ Վերջինիս հետ պիտի լիներ և Ս. Շահումյանը, որը Պապի «տեղակալն» էր (Զորացուցակ, էջ 143. հմմտ. Համապատում, էջ 161)։ Այնուհետև անմիջապես հետևում է Թորոսի 6 հազարանոց նորահավաք զորաբանակի արշավանքը Բարգուշատի Ֆաթհ-Ալի սուլթանի դեմ, և այդ զորքի եղերական վախճանը մելիք Ֆռանկյուլի դավաճանության պատճառով. «Եւ կոտորեցին զզօրսն Թորոսի, եւ զԹորոս սպանին և ի վեց հազարացն՝ միայն հազար չորս հարյուր մարդ զերծաւ, եւ այլքն մեռան» (ՊՍՇ, էջ 124—125)։

Այսպիսով, Ս. Շահումյանը, ի տարբերություն Տեր-Ավետիքի, Զևուի առումից հետո նշում է ոչ թե Որոտնա բերդի գրավումը և Նախիջևանի խանի հետ Դավիթ-բեկի նոր բախումը, այլ՝ Թորոսի արշավանքը Բարգուշատի դեմ։ Հաշվի առնելով Տեր-Ավետիքի ծանուցումն առ այն, որ Նախիջևանի խանի հարձակումը տեղի է ունեցել այն պահին, երբ Ղափանի հայոց զորքերի մի մասն արշավել էր Բարգուշատի վրա (ՊՏԱ, էջ 133—134), կարելի է մակաբերել, որ մի կողմից Թորոսի զորբեգական ուրշավը, մյուս կողմից, Որոտնա բերդի գրավումն ու Նախիջևանի խանի հարձակումը եղել են միաժամանակ։

Այս եզրակացության համար ունենք նաև լրացուցիչ հիմքեր.

1) Ղ. Սեբաստացին Ջավնդուրի զորաբանակի կործանումը նշում է 1724 թ.՝ «յամի երրորդի՝ յետ գալստեանն Դաւթի ի Ղափան (Համապատում էջ 157)։ Որոտնա բերդի գրավումը, որին անմիջապես հաջորդում է Դավիթ-բեկի նոր ընդհարումը Նախիջևանի խանի հետ (Տե՛ս ՊՏԱ, էջ 133—134),

45 Ս. Շահումյանի տվյալներով, 1722 թ. Նախիջևանի խանի զորքի թիվը կազմում էր 12 000 մարդ (տե՛ս ՊՍՇ, էջ 121)։ Տեր-Ավետիքի նշած 14 000 թիվը վերաբերում է 1724 թ. (Որոտնա բերդի գրավումը, որին անմիջապես հետևել է Նախիջևանի խանի արշավանքը, եղել է «ի յամին երրորդի, յետ գալստեան իւրոյ (Դավիթ-բեկի—Ա. Ա.) ի Ղափան», տե՛ս Համապատում, էջ 153)։ Երկու պատումների կողմից գրեթե նույն թվի հաղորդումը կարող է 1722—1724 թթ. Նախիջևանի խանի տրամադրության տակ գտնվող մշտական զորաբանակի արժանահավատ թվաքանակ համարվել։

46 ՊՏԱ, էջ 133—134։ Տեր-Ավետիքի պատումում «Զևու» անունը չի հիշատակված, նշված է միայն գրավված բերդի տիրակալի անունը՝ Ասլամազ Ղուլի, ինչն էլ թույլ է տվել Ղ. Սեբաստացուն, Ս. Շահումյանի պատումի համապատասխան դրվագի («...ժողովեցան Թուրքն ի Զեու բերդն, որոց գլուխն էր Ասլամազ Պէկն», ՊՍՇ, էջ 124) հետ համադրելուց հետո, ճիշտ կռահել բերդի անունը (տե՛ս Համապատում, էջ 152)։

նույնպես տեղի է ունենում «ի յամին երրորդի, յետ գալստեանն իւրոյ ի Ղափան» (Համապատում, էջ 153)։

2) Նախնական պատումների բնագրագիտական քննության ընթացքում Ս. Արամյանը նկատում է, որ պատումների հեղինակները (Ս. Շահումյանը և Տեր-Ավետիքը), առհասարակ, ավելի ուշադրություն են դարձրել այն մարտերին, որոնց անձամբ մասնակցել են[47]։

Ջավնդուրի ցնցող իրադարձությունները (մանրամասն շարադրանքը հուշում է Ս. Շահումյանի մասնակցությունը կամ դրանց մոտիկից հետևած լինելը) և Դավիթ-բեկի զորքի մեջ գտնված չլինելը բացատրում են, թե ինչու է Ս. Շահումյանն աչքաթող արել Ղափանի հյուսիսում տեղի ունեցած կարևոր անցքերը՝ Որոտնա բերդի առումը և Նախիջևանի խանի հետ Դավթի զորքի նոր բախումը։

3) Խնդրո առարկա հարցն առավել պարզաբանելուն օժանդակում է Համապատումի մի այլ տեղեկություն ևս. «Եւ ի յամին երրորդի, յետ գալստեան իւրոյ ի Ղափան, երթայ պաշարէ զմեծ եւ զանառիկ բերդն Որոտնու, եւ ի տօնի Ծաղկազարդին, որ չորրորդ օր էր պաշարման բերդին, եղեւ անձրեւ յոյժ, ով սքանչելեացս, եւ ի սաստկութենէ անձրեւին՝ մի կողմն պարսպին ինքնին անկաւ. սոքա իբրեւ զայն տեսին՝ ձայն ետուն, խրախոյս բարձին, ի վերայ յարձակեցան եւ մտին ի ներքս, եւ հարին կոտորեցին զամենայն այլազգիս, եւ առին զբերդն» (Համապատում, էջ 153, հմմտ. ՊՏԱ, էջ 133)։

Ա. Գ. Աբրահամյանը, վերոբերյալ հատվածի հիման վրա տոմարական հաշվումներ է արել և պարզել Որոտնա բերդի գրավման ոչ միայն թվականը, այլև ամիսն ու ամսաթիվը՝ 1724 թ. մարտի 29-ը[48]։

Կարելի՞ է արդյոք վստահելի համարել Որոտանի գրավումից տարիներ անց Տեր-Ավետիքի վերհիշած այսպիսի մանրակրկիտ տեղեկությունը, մասնավորապես՝ Ծաղկազարդի տոնի հիշատակումը։ Այս սկզբունքային հարցին պատասխանելու համար մասնագետներին հայտնի վավերագրերից քաղենք հետևյալ հատվածները.

Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետը 1724 թ. ապրիլի 4-ին Ղարաբաղից գրել է. «Եւ էս խայերին մէջտեղն Քուրդ կայ։ էս խայերն ասում ան, թէ Զատիկն առենք՝ երեքշապաթ կամ չորեքշապաթ օր կուգնանք Քուրտին վերէն. քուրտն փչացնէնք, որ տեղէս մինչի Երևան ողջ խայեր ան՝ Ա (1) կուտառնան»[49]։ 1724 թ. ապրիլի 9-ին նույն պատվիրակը հաղորդում է. «Խայերն էսօր գնացին... Ղափան... Աստուծով... ես էլ գէ դնոմ Ղափան»[50]։

Ղափան մեկնելուց և վերադառնալուց հետո՝ 1724 թ. հուլիսի 18-ին Իվան Կարապետի գրած զեկուցագրում կարդում ենք. «...մեք ապրիլի ԺԵ (15)-ումն գնացինք Ղափան հայոց ղօշունօվն, չուն Ղափանայ գիր էր եկէլ, թէ Նախչվանա խանըն և Բարգօշաաայ սոլթանըն եկէլ ին Ղափան, Հայոց ազգին շատ՝ Դ-ՇՌ (4—5000) ղօշում ին ջարթէլ, օղուլուշաղ եսիր ին

---

47 Տե՛ս Պատմութիւն Ղափանցւոց. Առաջաբան, էջ 81—83։

48 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի ազատագրական շարժման պատմության շուրջ, էջ 171։ Հաշվարկն ստույգ է։ Բայց Աչ. Աբրահամյանը սխալվում է՝ գրելով, որ Որոտանի ճակատամարտը տեղի է ունեցել «Դավիթ-բեկի և Ասլամաղ Ղուլի խանի զորքերի միջև» (Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի..., էջ 171)։ «Ղափանցվոց պատմության» բնագրերից և ոչ մեկում նշված չէ, թե Ասլամաղ Ղուլին «խոշոր զորաբանակ ուներ Որոտան բերդում» (տե՛ս նույն տեղում)։ Ս. Շահումյանը հայտնում է, որ Ասլամազ-բեկը Ջևու բերդի տիրակալն էր (տե՛ս ՊՍՇ, էջ 124)։ Ըստ Շահումյանի, Ջևուի ամբողջ կայազորը ոչնչացվել է՝ «հարին սատակեցին զնոսա... եւ ոչ մի ոք զերծաւ ի նոցանէ» (Նույն տեղում)։ Պետք է ենթադրել, որ Ասլամազ-բեկը սպանվածների մեջ էր։ Համապատումն այս հարցում փոփոխություն չի մտցնում (տե՛ս Համապատում, էջ 152)։ Որոտնա բերդը գրավվել է ավելի ուշ, քան Ջևուն (տե՛ս ՊՏԱ, էջ 133, հմմտ. Համապատում, էջ 152—153), հետևաբար նրա տիրակալի անունը մեզ անհայտ է մնում։

49 АРО, т. II, ч. II, док. № 239, с. 99:

50 Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., փաստ. № 45, էջ 204։

արարէլ՝ տարէլ... Եւ մեք ղօշունով գնացինք Ղափան, տեսինք, որ Խայէրն շարթվէլ ին և Քորդի ղօշունըն յետ ին դառցէլ, գնացէլ... Եւ մեր Հայոց ղօշունըն յետ արեկ և մեք մնացինք տեղն, որ գնինք ամենայն տեղ։ Քէրդն և Բարգուշատայ սուլթանըն մեր ճանապարհըն կտրեցին... Եկինք Խնծորիս անվանիս Ա(1) գէղ կէր, մեք եկինք տեղն Բշ (200) մարդով, թէ յեդ գանք. Քուրդն արէկ մեր վերէն... մեր փոքր ղօշունըն դուս գնաց Քէրդէրին գլխավորէրն ջարթեցինք, բարի յեդ եկինք էլ Ղարայբաղ»[51]։

Վերոգրյալ վավերագրերը տեղեկացնում են, որ 1724 թ. ապրիլի 4-ին Ղարաբաղի հայոց զինված ուժերն սկսում են Ղափան մեկնելու շտապ պատրաստություններ տեսնել, արշավի բուն պատճառը, սակայն, ժամանակավորապես թաքցնելով Իվան Կարապետից, ինչն ինքնին հետաքրքրական է։ Թեև Սղնախներում գտնվելու առաջին իսկ ամիսներից ռուսաց արքունիքի պատվիրակը Ղափան («Մեծ Խայեր») գնալու ցանկություն էր հայտնել[52], և Թարխան յուզբաշին պատրաստվում էր 2 000 զինվորով ուղեկցել նրան[53], սակայն ապրիլի 9-ին, ապա և ապրիլի 15-ին ղարաբաղյան երկու ղորաջոկատների անցումը Ղափան պայմանավորված էր բոլորովին այլ՝ արտակարգ հանգամանքներով. օգնության խնդրագիր էր հասել Ղարաբաղ[54], որտեղ ասված էր, թե Բարգուշատի սուլթանի և Նախիջևանի խանի հարձակման պատճառով Ղափանում չափազանց ծանր կացություն է ստեղծվել[55]։

---

51 APO, т. II, ч. II, док. № 277, с. 184—185:

52 Նույն տեղում, док. № 204, 205, 206, 210, 211, с. 61, 63, 65, 69, 71. Հմմտ. Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., փաստ. № 13, էջ 156։

53 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ..., փաստ. № 34, 35, 47, էջ 187, 189, 207. Հմմտ. APO, т. II, ч. II, док. № 207, 252, с. 85, 114.

54 Նույն 1724 թ. նոյեմբերի 5-ին Ռոսաստանի արտաքին գործերի կոլեգիայում Սղնախներից ժամանած Անտոն քահանան և Քյոխվա-Զալարին հայտարարում էին, որ Ղարաբաղից մինչև Ղափան՝ 3 օրվա ճանապարհ է (տե՛ս APO, т. II, ч. II, док. № 291, с. 205):

55 Սղնախների Ղափան մեկնած օգնական զորքի թիվը սովորաբար համարում են 2 000 զինվոր (տե՛ս APO, т. II, ч. I, с. LVII. Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի..., էջ 172)։ Եթե նկատի առնենք, որ 2 000 զինվորներով նախատեսվում էր Ղափան անցնել այն ժամանակ, երբ այնտեղ կայուն իրավիճակ էր և հայ զինվորությունը երկրի լիիշխան տերն էր, ապա ղափանցիների խոշոր պարտություններից հետո, Սղնախների օգնության արշաված զորքի թիվը, կարծում ենք, ավելի մեծ պիտի լիներ։

Հնարավոր է, որ 2 000 մարտիկից էր բաղկացած 1724 թ. ապրիլի 15-ին Իվան Կարապետի հետ Ղափան մեկնած երկրորդ զորաջոկատը։ Հենվելով Ա. Աբրահամյանի «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» աշխատության 1724 թ. ապրիլի 15-ով թվագրված № 47 փաստաթղթի վրա, կարող էինք այս վարկածը հավանական համարել. փաստաթղթի մեջ ասված է. «Մին լէվ մարդ կայ, անումն Թարխան այ, մեզ խամար 2 000 ռուբլի վեռէց (այսինքն՝ 2 000 զինվոր պատրաստեց—Ա. Ա.— տե՛ս նույն տեղում, փաստ. № 35, էջ 189), լորի տեսնենք՝ սրշանք խրիդ կառնենք, էլի ռուբլի էն»։ Սակայն այս նախադասությունը պատվիրակի 1724 թ. մարտի 10-ի զեկուցագրի վերջին նախադասության բառացի կրկնությունն է (տե՛ս նույն տեղում, փաստ. № 34, էջ 187), իսկ Աշ. Հովհաննիսյանի խմբագրությամբ ավելի ուշ լույս տեսած փաստաթղթերի ժողովածուում «Մի էջ...»-ի № 47 վավերագիրը, հավանաբար, վերստուգվելուց հետո, թվագրվել է ոչ թե ապրիլի 15-ով, այլ բավական առաձգական ժամանակով՝ 1724 թ. գարունով (տե՛ս APO, т. II, ч. II, док. № 252, с. 114): Այսպիսով, 1724 թ. ապրիլին Ղափան մեկնած սղնախցիների զորաբանակի թվաքանակի հարցը պետք է համարել չլուծված։ Մեկ այլ դիտարկում։ 1724 թ. հուլիսի 18-ի զեկուցագրում Իվան Կարապետը հիշատակում է Ղափանում իր հետ մնացած չոկատի թվաքանակը՝ 200 զինվոր, ինչը Աշ. Հովհաննիսյանը հնարավոր է համարում ուղղել 2 000-ով (տե՛ս APO, т. II, ч. I, с. LVII). Բայց չէ՞ որ զեկուցագրում հստակորեն նշվում է, որ Սղնախների բանակի մեծ մասը տեսնելով, որ թշնամու զորքերը Ղափանից նահանջել են, ետ է վերադարձել. «Եւ մեր Հայոց ղօշունըն յետ արեկ և մեք մնացինք տեղն, որ գնինք ամենայն տեղ»։ Ուստի Ղափանում ռուսաց պատվիրակին ուղեկցելու նպատակով մնացած 200 զինվորների քանակը կասկածելի համարելը հիշա չէ։

Իվան Կարապետի հաղորդումները, ամբողջական առումով, համապատասխանում են «Ղափանցվոց պատմության» երեք բնագրերի հիման վրա սույն հոդվածում կատարված քննության եզրահանգումներին.

ա) Իվան Կարապետը վկայում է, որ Նախիջևանի խանի և Բարգուշատի սուլթանի զորքերը միաժամանակ են հարձակվել Ղափանի վրա։ Կասկած չի մնում, որ Դավիթ-բեկի այդ երկու թշնամիները համաձայնեցրել էին իրենց գործողություններ։

բ) Ղափանի հայոց զորքի կորուստների մասին Իվան Կարապետի նշած թիվը՝ 4 000—5 000 զինվոր, գրեթե ճշգրիտ համապատասխանում է Ս. Շահումյանի հաղորդած՝ Թորոսի բանակի 4 600 և Տեր-Ավետիքի հաղորդած՝ Դավիթ-բեկի զորքի 900 ընկած մարտիկների ընդհանուր թվին՝ 5 500-ին (ՊՍՇ, էջ 125. ՊՏԱ, էջ 134)։

գ) Ս. Շահումյանը պատմում է, որ Կենավուզից Ջավնդուր 2 000-անոց օգնական զորք ուղարկելուց հետո, Ֆաթհ-Ալի սուլթանը նահանջեց Բարգուշատ. «Իսկ Փաթալու Սուլթանն իբրու լուաւ թէ յօգնականս ետուն Նուպարին ի Կենաուղայ, դարձաւ յետս» (ՊՍՇ, էջ 125, հմմտ. Համապատում, էջ 158)։ Իվան Կարապետը նույնպես ծանուցում է, որ դեռ մինչև ղարաբաղյան զորաբանակի ժամանելը, թշնամու զորքերը ինչ-ինչ պատճառներով Ղափանից ետ էին քաշվել. «Եւ մեք զօշունով գնացինք Ղափան, տեսինք, որ Խայերն ջարթվէլ ին և Քորդի զօշունըն յետ ին դառցէլ, գնացել»։ Պարզ է, որ թշնամու նահանջի պատճառը Կենավուզից ժամանակին հասած օգնությունն էր։

դ) Վերջապես, լիովին համընկնում են ժամանակագրական տվյալները։ Որոտնա բերդը գրավվել է 1724 թ. մարտի 29-ին։ Ըստ Տեր-Ավետիքի պատումի, Բարգուշատի արշավանքը և Նախիջևանի խանի հարձակումը տեղի են ունեցել Որոտանի գրավումից անմիջապես հետո (ՊՏԱ, էջ 133—134). Ղարաբաղում ղափանցիների պարտության մասին առաջին լուրն ստացել են ապրիլի 4-ին։ Հետևապես, այդ ճակատամարտերը տեղի են ունեցել 1724 թ. մարտի 29-ից մինչև ապրիլի 4-ը ընկած օրերի ընթացքում[56]։

Ս. Շահումյանի, Տեր-Ավետիքի և Իվան Կարապետի հաղորդումների իրար լրացնելու և հաստատելու այս իրողությունը հուշում է, որ գործ ունենք բացառիկ արժանահավատ աղբյուրների հետ։ Հատուկ ուշադրության են արժանի Տեր-Ավետիքի վերհիշած և պատմած հաղորդումները։

* * *

Ի մի բերելով շարադրվածը, կարելի է եզրակացնել.

1) Խմբագրման ընթացքում առաջացած թյուրընկալումների պատճառով Համապատում բնագրի մեջ առաջացել են հետևյալ ընդհանուր բնույթի սխալները.

ա) Նույնացված են Նախիջևանի խանի զորքերի դեմ Դավիթ-բեկի մղած երկու տարբեր ճակատամարտերը.

բ) Սխալ է ներկայացված Դավիթ-բեկի մուտքը Սյունիք. Համապատումից դուրս են մնացել Սիսիան գավառում տեղի ունեցած անցքերը (զորահավաքը և այլն).

գ) Սխալ է նշված նաև Դավիթ-բեկի գլխավորությամբ Վրաստանից Սյունիք ժամանած հայկական զորաջոկատի թվաքանակը։

Թվարկված սխալներից էլ բխում են մի շարք անճշտություններ և շեղումներ, որոնց մասին արդեն խոսել ենք։

2) Նախնական բնագրերի ներկայացված հատվածների քննությունը ցույց

---

56 Ա. Գ. Աբրահամյանը, հաշվի չառնելով Որոտնա բերդի գրավման իր իսկ պարզած ամիսն ու օրը և հիմնվելով միայն Իվան Կարապետի հաղորդումների վրա, այնուամենայնիվ, ճիշտ է կռահել 1724 թ. Նախիջևանի խանի հետ Դավիթ-բեկի զորքերի ընդհարման ժամանակը. «Եթե ընդունելու լինենք, որ Նախիջևանի ճակատամարտի լուրը Ղարաբաղ կարող էր հասնել մի քանի օրվա ընթացքում, և Ղարաբաղի հայերը առանց հետաձգելու նրանց օգնության պիտի գնացած լինեին, ապա այդ դեպքում Նախիջևանի ճակատամարտը պետք է եղած լինի 1724 թ. ապրիլի սկզբներին» (Ա. Գ. Աբրահամյան. Սյունիքի XVIII դարի..., էջ 172)։

է տալիս, որ Ս. Շահումյանը և Տեր-Ավետիքը իրենց իմացածը պատմել են դեպքերի ժամանակագրական կարգին լիովին համապատասխան ձևով: Մինչև 1724 թ. ամառը, ուր ընդհատվում է Ս. Շահումյանի պատումը, զույգ պատումները զուգահեռաբար նկարագրում են դեպքերի իրարահաջորդ ընթացքը։

Բնագրերի հրատարակիչը՝ Ս. Սրամյանը, նկատի ունենալով Ս. Շահումյանի պատումը, գրում է. «Առաջին մասին էջերուն մեջ կան... պատմված դեպքերու իրարու հետ անշաղկապ կցումներ, ժամանակագրական ետևառաջությունններ, մինչդեռ այդպիսի թերություններ չկան երկրորդ մասին մեջ (այսինքն՝ Տեր-Ավետիքի պատումում—Ա. Ա.)»[57]։ Այս գնահատականի ստուգության չափանիշը, անշուշտ, եղել է Համապատում ընագիրը։ Մինչդեռ, ինչպես տեսանք, թվարկված թերությունները վերաբերում են ոչ թե Ս. Շահումյանի պատումին, այլ հենց Համապատում շարադրանքին։

ИЗ ИСТОРИИ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ СЮНИКА 1720-х ГОДОВ

(Опыт сопоставления первоисточников)

А. М. АЙВАЗЯН

Резюме

В 1978 г. в Венеции (на острове св. Лазаря армянских Мхитаристов) вышло в свет полное оригинальное издание «Истории капанцев», включающее в себя как отредактированный Гукасом Себастаци сводный вариант этого исторического произведения, так и послужившие первоисточником для Себастаци отдельные рассказы двух участников сюнийской (капанской) освободительной войны 1720-х гг.—Степаноса Шаумяна и Тер-Аветика. Однако, значительные различия между двумя первоначальными рассказами и сводным текстом «Истории капанцев» до сих пор остаются вне поля зрения специалистов. В настоящей статье на основе источниковедческого и научно-исторического анализа трех первоисточников «Истории капанцев» и дополнительного материала, относящегося к капанскому движению, рассматривается ряд важных событий 1720-х гг., а также особенности редактирования сводного текста Г. Себастаци. Указывается ряд недоразумений сводного текста: 1. отождествлены два различных сражения (1722 г. и 1724 г.) Давид-бека с войсками нахичеванского хана; 2. неправильно представлено вхождение отряда Давид-бека в Сюник (из сводного текста выпали события, происшедшие в гаваре Сисиан); 3. неверно дана численность армянских воинов, прибывших во главе с Давид-беком из Грузии и др. В результате выяснения вышеназванных ошибок по-новому освещаются, в частности, следующие узловые вопросы, связанные с историей указанного периода: доказывается, что Давид-бек прибыл из Грузии не со своими 30—40 сподвижниками, как принято считать в армянской историографии, а с 2000-ым отрядом армянских воинов; первая битва произошла не в местности Ераблур (Учтепэ), а на реке Нахичеван, где Давид-бек с 6000-ым войском (2000 бойцов, прибывших вместе с ним, и 4000—набранных в гаваре Сисиан) противостоял 12-ти тысячной армии нахичеванского хана. Это первое сражение на армянской земле он проиграл (потери армянской стороны составили 2200 воинов). После этого Давид-бек с оставшимся у него отрядом из 412 человек прорвался в центральную часть капанской провинции, откуда и начал развертывать успешную освободительную войну как против обосновавшихся в Капане персидских феодалов и их ставленников, так и против окружающих враждебных сил. Устанавливается время комбинированного двухстороннего нападения на Капан баргушатского султана Фатх-Али и нахичеванского хана и гибели отряда Торос-бека—между 29 марта и 4 апреля 1724 г. Для проведения дальнейших исследований венецианского издания «Истории капанцев» важнейшим фактором становится утверждаемое в статье положение о том, что рассказы Ст. Шаумяна и Тер-Аветика параллельно описывают капанские события до лета 1724 г., когда прерывается рассказ Ст. Шаумяна.

---

57 Պատմութիւն Ղափանցւոց, Առաջաբան, էջ 78։